041.1605.291118

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

29 նոյեմբերի 2018 թվականի N 1605-Լ

«ԱՂԵՏՆԵՐԻՆ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՕՐ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով՝

Հաստատել «Աղետներին դիմակայունության օր» միջոցառումների անցկացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ

Հավելված
ՀՀ վարչապետի
2018 թ. նոյեմբերի 29-ի
N 1605-Լ որոշման

ԾՐԱԳԻՐ «ԱՂԵՏՆԵՐԻՆ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՕՐ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

	Միջոցառում ներ անվանումը	Անցկացման վայրը և ժամկետները	Մասնակիցները	Պատասխանատուն	Ֆինանսավորման աղբյուրները
1	2	3	4	5	6
1.	ՄԱԿ-ի Միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) քարտուղարության հետ համատեղ անցկացվող «ՈՒժեղ երկրաշարժի դեպքում հետևանքների վերացում» թեմայով INSARAG-ի Աֆրիկա-Եվրոպա-Միջին Արևելք տարածաշրջանային	ք. Երևան, 03.12.2018թ.-07.12.2018թ.	ՄԱԿ-ի INSARAG քարտուղարության, ՀՀ ԱԻՆ, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, Միջազգային քաղաքային որոնողափրկարարական թիմ (ՔՈՓ)	ՀՀ ԱԻՆ, ՄԱԿ (համաձայնությամբ)	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության միջոցներով

	սիմուլյացիոն վարժանք				
2.	Միջազգային գիտաժողովի կազմակերպում՝ նվիրված Սպիտակի երկրաշարժի 30-ամյակին և սեյսմիկ պաշտպանության տարբեր ոլորտների նվաճումներին	04.12.2018 թ.-07.12.2018թ.	Հրավիրվածներ և ՀՀ գիտաշխատողներ	ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԳԱԱ (համաձայնությամբ)	15 մլն դրամ՝ բարերարների, երկրաբանական ինստիտուտի, գիտության պետական կոմիտեի և ՄԱՀԾ-ի հաշվին
3.	«Ուժեղ երկրաշարժի դեպքում որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով ցուցադրական վարժանք	ք. Գյումրի, 07.12.2018թ.	ՀՀ ԱԻՆ ՓԾ	ՀՀ ԱԻՆ	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության միջոցներով
4.	«Ուժեղ երկրաշարժի դեպքում տարհանման կազմակերպում» թեմայով վարժանքներ	ՀՀ բոլոր ուսումնական հաստատություններում, 06.12.2018թ.	Ուսումնական հաստատությունների աշխատակիցներ աշակերտներ	ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԿԳՆ, մարզպետարաններ, համայնքապետարաններ (համաձայնությամբ)	Համաձայն ուսումնական հաստատությունների տարհանման պլանների
	«Ուժեղ երկրաշարժի դեպքում աշակերտների պաշտպանության կազմակերպում» թեմայով հատուկ տակտիկական ուսումնավարժություն	ՀՀ Արմավիրի մարզի Դալարիկի միջնակարգ դպրոց, 05.12.2018թ. ՀՀ Արմավիրի մարզի Գետաշենի միջնակարգ դպրոց, 06.12.2018թ. ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի թիվ 7 հիմնական	Ուսումնական հաստատությունների աշխատակից-ներ, աշակերտներ	ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԿԳՆ, ՀՀ Արմավիրի մարզպետարան, ուսումնական հաստատությունների տնօրեններ (համաձայնությամբ)	Համաձայն ՀՀ ԱԻՆ ՓԾ հիմնական միջոցառում-ների պլանի

		դպրոց, 06.12.2018թ.				
	«Ուժեղ երկրաշարժի դեպքում Վանաձորի պետական համալսարանի աշխատակազմի և ուսանողների պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, 06.12.2018թ.	Վանաձորի պետական համալսարան, Լոռու ՄՓՎ, «Գազպրոմ Արմենիա», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «ՀԷՑ» ՓԲԸ-ներ, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի և Բազումի բաժիններ, Ճանապարհային ոստիկանություն, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շտապ բուժօգնության բաժանմունք	ՀՀ ԱԻՆ	Համաձայն ՀՀ ԱԻՆ ՓԾ հիմնական միջոցառումների պլանի	
5.	Հրշեջ-փրկարարական, բժշկական, կենսաապահովման միջոցների, ճառագայթային և քիմիական գույքի ցուցադրություն	Մարզկենտրոններ և Երևան քաղաք, 06.12.2018թ.	ՀՀ ԱԻՆ	ՀՀ ԱԻՆ		
6.	«Ինչ՞, որտե՞ղ, ե՞րբ» բարեգործական, ինտելեկտուալ խաղի կազմակերպում ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների միջև	03.12.2018թ.	ՀՀ ԱԻՆ, ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ ԱԳՆ, ՀՀ մշակույթի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական	ՀՀ ԱԻՆ, ՀՀ Շիրակի մարզ, Գյումրու քաղաքապետարան (համաձայնությամբ)	ՀՀ ԱԻՆ խնայված միջոցների հաշվին	

			հարցերի նախարարություն, Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե, ՀՀ ոստիկանություն			
7.	Ուսումնական հաստատություններում, համայնքապետարաններում և կազմակերպություններում, զորամասերում դասախոսությունների, սեմինարների անցկացման համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստում և տրամադրում	06.12.2018թ.	ՀՀ ԱԻՆ	ՀՀ ԱԻՆ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, զորամասերի հրամանատարներ	Ֆինանսավորում չի պահանջվում	
8.	1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի 30-րդ տարելիցին նվիրված «Սպիտակի երկրաշարժ» թեմայով նամականիշի մարում	07.12.2018թ.		ՀՀ ԱԻՆ, «Հայփոստ» ՓԲԸ	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, »Հայփոստ» ՓԲԸ-ի հետ համագործակցությամբ	
9.	Այցելություն աղետի գոտի և ծաղկեպսակների տեղադրման արարողություն. 1) Գյումրի 2) Սպիտակ 3) Վանաձոր 4) Ստեփանավան	07.12.2018թ.		ՀՀ ԱԻՆ, ՀՀ ՏԿԶՆ, ՀՀ Լոռու և Շիրակի մարզպետարաններ	ՀՀ ԱԻՆ խնայված միջոցների հաշվին	

10.	Միջոցառում՝ Սև բերդում. Վ. Ա. Մոցարտի «Ռեքվիեմ»՝ կամերային երաժշտության ազգային կենտրոնի և Գյումրու կոլեկտիվների ու մենակատարների մասնակցությամբ	Ք. Գյումրի, 07.12.2018թ.		Միջգերատեսչական հանձնաժողով, ՀՀ մշակույթի նախարարություն	
11.	Վետերանների ընդունելություն՝ ՀՀ ԱԻ նախարարի կողմից	11.12.2018թ.	Սպիտակի երկրաշարժի մասնակից վետերաններ	ՀՀ ԱԻՆ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ ԱԻՆ խնայված միջոցների հաշվին
12.	Գյումրու «Նանուլիկ» մանկապարտեզի բացում	07.12.2018թ.		Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ)	
13.	Շիրակի մարզի Արևիկ գյուղում մանկապարտեզի բացում	07.12.2018թ.		ՀՀ կրթության և գիտության նախարարություն	